



ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ



2018

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ (ՀՆԱ) .....	2
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ և ՃՅՈՒՂԵՐ .....	4
3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ .....	9
4. ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ .....	17
5. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ .....	19
6. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ .....	20


1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ (ՀՆԱ)

Համախառն ներքին արդյունքի աճը 2018թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 5.2%:




Արտադրական ՀՆԱ

Հետճգնաժամային ամբողջ ժամանակահատվածի համախառն ներքին արդյունքի աճի կիսամյակային միտումները ցույց են տալիս, որ ՀՆԱ գերակշիռ մասը (60.0-63.0%) արտադրվում է 2-րդ կիսամյակում: ՀՆԱ ձևավորող հիմնական ճյուղերի ավելացված արժեքի, և որպես հետևանք՝ նաև զուտ հարկերի մեծ մասը ևս ձևավորվում է 2-րդ կիսամյակում: ՀՆԱ տարեկան աճի վրա բացասական ազդեցություն էին ունենում կամ գյուղատնտեսության և կամ շինարարության ավելացված արժեքի նվազումը:



2018թ. ևս գյուղատնտեսության ավելացված արժեքի նվազում գրանցվեց, որի բացասական նպաստումը ՀՆԱ աճին կազմեց -1.3 տոկոսային կետ: ՀՆԱ-ն ձևավորող մյուս հիմնական ոլորտների նպաստումը աճին դրական է եղել: Մասնավորապես առևտրի և ծառայությունների նպաստումը կազմել է 5.1 տոկոսային կետ, շինարարությանը՝ 0.1, զուտ հարկերինը՝ 0.8 տոկոսային կետ:

Արդյունաբերության նպաստումը աճին կազմել է 0.7 տոկոսային կետ: Ընդ որում միայն մշակող արդյունաբերության նպաստումը կազմել է 1.03 տոկոսային կետ, իսկ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 0.2 տոկոսային կետ: Արդյունաբերության ենթաճյուղերից առավելագույն բացասական նպաստում (ի տարբերություն 2017թ. դրական նպաստման) ունեցել է հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ենթաճյուղը՝ -0.4 տոկոսային կետ (նվազումը՝ -14.1%): Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ենթաճյուղի բացասական նպաստումը կազմել է -0.1 տոկոսային կետ:



Ընդհանուր առմամբ թողարկման ծավալի և ավելացված արժեքի աճի համեմատականի առումով 2018 թվականին պատկերը փոխվել է: Մասնավորապես, 2018 մշակող արդյունաբերության թողարկումը աճել է 10.0%-ով, հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործումը նվազել է 14.0%-ով, 2017 թվականի համապատասխանաբար 15.5 և 14.6% դիմաց: Մինչդեռ, 2018 թվականին մշակող արդյունաբերության ավելացված արժեքի աճը կազմել է 10.1%, 2017 թվականի նույն ժամանակաշրջանի 5.9%-ի դիմաց, իսկ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ճյուղի ավելացված արժեքը նվազել է 14.1%-ով, 2017 թվականի 18.2% աճի դիմաց: Ըստ գնահատումների՝ առանց հանքագործական արդյունաբերության 2018թ. ՀՆԱ աճը կկազմեր 5.8%:

Առավել բարձր տեսակարար կշիռ ունեցող ծառայությունների տեսակներից (ըստ տեսակարար կշռի նվազման) աճ է գրանցվել հետևյալների գծով՝ անշարժ գույքի հետ կապված գործունեություն՝ 3.2%, մշակույթ, զվարճություններ և հանգիստ՝ 23.9%, ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝ 19.0%, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում՝ 11.8%: Վերոնշյալ ծառայության տեսակների գումարային տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 24.4%, իսկ նպաստումը ՀՆԱ 5.2% աճին՝ 3.3 տոկոսային կետ:

ՀՆԱ կիսամյակային ցուցանիշները ցույց են տալիս, որ 2018թ. 2-րդ կիսամյակում մշակող արդյունաբերության աճն 1-ին կիսամյակի համեմատ արագացել է՝ կազմելով՝ 10.8%, 1-ին կիսամյակի 9.2% -ի դիմաց: 2018թ. 2-րդ կիսամյակի ՀՆԱ 3.0% աճին մշակող արդյունաբերության նպաստումը կազմել է 1.1 տոկոսային կետ:

Ծառայությունների ծավալի աճը կազմել է 18.8%, ընդ որում 2-րդ կիսամյակի աճը կազմել է 19.4%, 1-ին կիսամյակի 18.1% -ի դիմաց: Ծառայությունների ավելացված արժեքի աճը 2018թ. կազմել է 9.8%, 2-րդ կիսամյակինը 9.9%, 1-ինի 9.7% -ի դիմաց:

Ծառայության տեսակներից 2-րդ կիսամյակում 1-ին կիսամյակի համեմատությամբ աճի արագացում է գրանցվել «կացություն և հանրային սննդի» 9.3 տոկոսային կետով՝ կազմելով 39.4%, ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝ 7.4 տոկոսային կետով՝ կազմելով՝ 22.5%, մշակույթ, զվարճություններ և հանգիստ՝ 8.6 տոկոսային կետով՝ կազմելով՝ 27.4%:

**ՀՆԱ օգտագործման եղանակ**

Օգտագործման եղանակով ՀՆԱ բաղադրիչների աճի միտումներում թերևս կարելի է առանձնացնել համախառն կուտակման բարձր աճը, որը դրական ազդեցություն կունենա 2019 թվականի ՀՆԱ ցուցանիշի վրա: Ընդ որում, եթե հիմնական միջոցների համախառն կուտակման աճը վարքագծային է, ապա նյութական շրջանառու միջոցների պաշարների ծավալը 2018 թվականի առաջին եռամսյակից սկսած աննախադեպ բարձր է 2017 թվականի ցուցանիշներից: Այնուամենայնիվ 2018 թվականի եռամսյակային պաշարների փոփոխության ցուցանիշները որոշակի նվազում ունեն: Այսպես 2018թ. 4-րդ եռամսյակում 1-ին

եռամսյակի համեմատ պաշաների փոփոխության ցուցանիշը նվազել է ավելի քան 60.2 մլրդ դրամով՝ կազմելով 51.8 մլրդ դրամ:


2018 թվականին վերջնական սպառման ծախսերն աճել են 3.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վերջնական սպառման 5.2% աճով: Պետական հիմնարկների ծախսերը նվազել են 6.4% -ով, հիմնականում ի հաշիվ պետական հիմնարկների ծախսերում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող (66.5%) կոլեկտիվ պահանջույնների բավարարման գծով գրանցված 10.0% նվազման:

Ապրանքների և ծառայությունների արտահանումն աճել է 5.2%-ով, իսկ ներմուծումը՝ 10.9%-ով: ՀՆԱ կառուցվածքում արտահանման մասնաբաժինը կազմել է 37.8%, իսկ ներմուծմանը՝ 52.5%՝ 2017 թվականի նկատմամբ ավելանալով համապատասխանաբար 0.5 և 3.0 տոկոսային կետով:

Ապրանքների և ծառայությունների արտահանման նպաստումը ՀՆԱ աճին կազմել է 1.97 տոկոսային կետ: Ըստ մեր գնահատման ապրանքների արտահանման նպաստումը կազմել է 0.50, իսկ ծառայություններինը՝ 1.47 տոկոսային կետ:

Տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների վերջնական ծախսերն աճել են 16.0%-ով: ՀՆԱ կառուցվածքում վերջնական սպառման ծախսերը կազմել են 90.8%, 2017 թվականի նկատմամբ նվազելով 1.0 տոկոսային կետով:


Համախառն կուտակումն աճել է ծավալը 28.5%-ով, որից հիմնական միջոցների համախառն կուտակումն աճել է 5.0%-ով: ՀՆԱ կառուցվածքում համախառն կուտակման մասնաբաժինը կազմել է 22.4%, 2017 թվականի նկատմամբ ավելանալով 3.4 տոկոսային կետով:



**2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ և ՃՅՈՒՂԵՐ**

Տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 105.8%՝ տարսկզբից արձանագրելով աճի դանդաղման միտում: 2018թ. դեկտեմբերին 2017թ. նույն ամսվա համեմատ կազմել է 106.4%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 124.3%:

Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ 2018 թվականի 5.8% աճն արձանագրվել է արդեն իսկ 7.7%-ով աճած (2017 թվականի աճը) տնտեսության պարագայում, այսինքն՝ բարձր բազայի վրա: Ավելին, 2017 թվականի նշված ցուցանիշը, իր հերթին, նման բարձր մակարդակ արձանագրել էր նախորդ՝ 2016 թվականի հունվար-նոյեմբերի բավականին ցածր բազայի նկատմամբ (0.7%):





Ամսական աճողական կտրվածքով տնտեսական ակտիվության ցուցանիշի էական դանդաղումը պայմանավորված է (բացառությամբ ծառայությունների ոլորտի) ոլորտներում գրանցված աճի դանդաղմամբ (գյուղատնտեսության պարագայում՝ օգոստոս ամսից ցուցանիշի նվազմամբ): Առավելագույն դրական նպաստում ունեցել է ծառայությունների ոլորտը և, ի տարբերություն նախորդ տարվա բացասական նպաստման՝ շինարարության ոլորտում գրանցված աճը:

Տնտեսական ակտիվության ցուցանիշին ճյուղերի նպաստ

	ՏԱՑ և ճյուղերի աճ, %		Նպաստում ՏԱՑ-ին, տոկոսային կետ		ՀՆԱ կառուցվածք, %	
	2018	2017	2018	2017	2018	2017
ՏԱՑ	5.8	7.7	-	-	-	-
Արդյունաբերություն	4.3	12.6	1.2	2.7	19.6	19.4
Գյուղատնտեսություն	-7.6	-2.8	-1.5	-0.7	16.3	17.8
Շինարարություն	4.5	2.4	0.5	0.3	8.0	8.4
Առևտուր	8.7	14.2	1.2	1.7	11.8	10.7
Ծառայություններ	18.8	14.5	4.4	3.8	44.3	43.6

ՏԱՑ 105.8%-ին դրական նպաստում են ունեցել ծառայությունները՝ 4.4 տոկոսային կետով, առևտրի շրջանառությունը՝ 1.2 տոկոսային կետով, արդյունաբերությունը՝ 1.2 տոկոսային կետով և շինարարությունը՝ 0.5 տոկոսային կետով: Բնականաբար, գյուղատնտեսության անկումը բացասաբար է անդրադարձել ՏԱՑ վրա՝ զսպելով այն ավելի քան -1.5 տոկոսային կետով:


**Շինարարության** ծավալի աճը կազմել է 4.5%: Նախորդ տարիների նկատմամբ շինարարության ոլորտում նկատվում է ակտիվություն:




Ըստ ֆինանսավորման աղբյուրների շինարարության աճին նպաստել են կառուցվածքում 19.4% տեսակարար կշիռ ունեցող միջազգային վարկերի գծով իրականացված շինարարության 14.1% աճը, 24.8% տեսակարար կշիռ ունեցող բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարության՝ 5.4% աճը, 9.0% տեսակարար կշիռ ունեցող պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարության՝ 1.6% աճը և 43.4% տեսակարար կշիռ ունեցող կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության 1.2% աճը:

Նվազում է գրանցվել միայն 1.9% տեսակարար կշիռ ունեցող մարդասիրական օգնության միջոցով իրականացված շինարարության գծով՝ -0.9%:

Շինարարության կառուցվածքն ըստ ֆինանսավորման աղբյուրների, %



Շինարարության կառուցվածքն ըստ ՏԳՏ (երկնիշ), %





- կազմակերպությունների միջոցների
- միջազգային վարկերի
- համայնքների միջոցների
- բնակչության միջոցների
- պետական բյուջեի
- մարդասիրական օգնության միջոցների

- էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
- մշակող արդյունաբերություն
- ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
- տրանսպորտ
- կացության և հանրային սննդի կազմակերպում
- տեղեկատվություն և կապ
- անշարժ գույքի հետ կապված գործունեություն
- մշակույթ, զվարճություններ և հանգիստ
- Այլ

Ըստ գործունեության տեսակների 2018 թվականին շինարարության աճ է գրանցվել հետևյալ ենթաճյուղերում (ներկայացված է ըստ տեսակարար կշռի մեծության նվազման). անշարժ գույքի հետ կապված գործունեության գծով՝ 5.7 (2017թ.՝ 1.7%), էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 32.0% (2017թ.՝ 6.9%), տրանսպորտ՝ 27.2% (2017թ.՝ 5.9%), սպասարկման այլ ծառայություններ՝ 1.4% (2017թ.՝ 5.6%), մշակող արդյունաբերություն՝ 61.4% (2017թ.՝ -26.3%): Շինարարության ծավալները նվազել են գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն՝ -31% (2017թ.՝ 33.4%), մշակույթ, զվարճություններ հանգիստ՝ -24.6% (2017թ.՝ -40.1%), հանքագործական արդյունաբերությունում՝ -74.2% (2017թ.՝ աճել է 2.4 անգամ), ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝ -21.6% (2017թ.՝ աճել է 2.9 անգամ), տեղեկատվություն և կապ՝ -5.0% (2017թ.՝ -33.1%): Շինարարության ծավալների աճ է գրանցվել Արմավիրում՝ 48.7%, Սյունիքում՝ 36.6%, Կոտայքում՝ 16.4%, Երևանում՝ 16.3%, Լոռիում՝ 16.2%, Գեղարքունիքում՝ 13.1 և Շիրակում՝ 6.8%: Նվազում է գրանցվել Վայոց Ձորում՝ -72.1%, Արարատում՝ 28.8%, Տավուշում՝ -15.7% և Արագածոտնում՝ -0.5%:


Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2018 թվականին նվազել է 7.6%-ով (2017թ. -2.8%):



Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի նվազումը պայմանավորված է առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող բուսաբուծության ենթաճյուղում գրանցված -12.1% նվազմամբ: Անասնաբուծության ենթաճյուղում գրանցվել է -2.7% նվազում, իսկ ձկնորսության և ձկնաբուծության ենթաճյուղում՝ 1.1% աճ:




Ամիսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ համեմատականով 2018թ. փետրվարից-հունիս ամիսներին գրանցվել է աճ: Առավելագույն աճը գրանցվել է հունիս ամսին՝ 14.0%: Մյուս ամիսներին գրանցվել է ցուցանիշի նվազում: Առավելագույն՝ 22.1% նվազում գրանցվել է հոկտեմբեր ամսին:



Հողի հիմնապաշարը կազմում է 2.974 մլն հեկտար, զառիվայր և կտրուկ լանջերը զբաղեցնում են հողի մակերևույթի 47 տոկոսը: Վերջին տարիներին կրճատվել է գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսը՝ 2017 թվականին կազմելով՝ 2.044 մլն հա, ինչը գլխավորապես տեղի է ունեցել վարելահողերի մակերեսի 0.6, խոտհարքերի՝ 4.8 և արոտների 4.8% կրճատման արդյունքում:



Առևտրի շրջանառության աճը կազմել է 8.7% (2017թ. աճը՝ 14.0% ), մանրածախ առևտրի աճը՝ 1.3% (2017թ.՝ 5.5%-ով), մեծածախ առևտրինը՝ 16.4%, (2017թ.՝ 25.8%) իսկ ավտոմեքենաների առևտրինը՝ 16.7% (2016թ. աճը՝ 15.0%):



Ըստ առևտրի օբյեկտների՝ խանութների միջոցով իրականացվող (տեսակարար կշիռը՝ 79.8%) մանրածախ առևտրի ծավալներն աճել են 2.6%-ով: Առևտրի այլ օբյեկտների (ներառում է շառժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ առևտրի կետերը) միջոցով իրականացվող առևտրաշրջանառության ծավալը մնացել է անփոփոխ 2.1% (տեսակարար կշիռը՝ 12.3%): Առևտրի մյուս օբյեկտների գծով գրանցվել են նվազումներ. գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ՝ -25.7% (տեսակարար կշիռը՝ 1.1%), կրպակներ՝ -5.3% (տեսակարար կշիռը՝ 2.0%), սպառողական ապրանքների շուկաներ՝ -4.4% (տեսակարար կշիռը՝ 4.8%),:



**Ծառայությունների ծավալի աճը կազմել է 18.8%:**




Աճ է գրանցվել ծառայությունների բոլոր տեսակների գծով: Ծառայությունների կառուցվածքում շարունակում են գերակշռել «մշակույթ, զվարճություններ և հանգիստ», «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» և «կացության և հանրային սննդի կազմակերպում» տեսակները: Վերոնշյալ ծառայությունների գումարային տեսակարար կշիռը կազմել է 78.7%, նախորդ տարվա 77.6%-ի դիմաց:

Ծառայությունների տեսակների աճը և կառուցվածքը, 2018թ. ըստ տեսակարար կշռի նվազման

	Աճ, %	Տեսակարար կշիռ, %
մշակույթ, զվարճություններ և հանգիստ	36.6	22.8
ֆինանսական և ապահովագրական գործունեություն	19.6	20.8
տեղեկատվություն և կապ	4.7	13.9
տրանսպորտ	10.9	12.6
կացության և հանրային սննդի կազմակերպում	32.0	8.6
վարչարարական և օժանդակ գործունեություն	16.2	5.1
առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	25.7	4.2
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	9.5	3.3
կրթություն	0.3	3.1
սպասարկման այլ ծառայություններ	8.4	1.7

«Մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ծառայության տեսակի կառուցվածքում գերակշռող մաս կազմում է «շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն» ենթատեսակը՝ տեսակարար կշիռը 2018 թվականին՝ 97.2% (ստեղծագործական, արվեստի և հանդիսավոր ներկայացումների, գրադարանների, արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների գործունեությունը՝ 0.9, իսկ սպորտի, զվարճությունների և հանգստի՝ 1.9%):


Շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն» ենթատեսակի ծավալը 2018 թվականին կազմել է 74.4 մլրդ դրամ, որի 80.4%-ը բաժին է ընկնում «վիճակախաղերի, տեսախաղային տերմինալների, վիրտուալ մոլեխաղերի և բուքմեքերական գործունեության կազմակերպմանը», իսկ 19.6%-ը՝ «խաղատների գործունեությանը» և ընդամենը 0.01%-ը՝ «դրամային շահումով խաղային ավտոմատներին»:



Ակնհայտ է, որ աճի վրա առավելապես մեծ է «վիճակախաղերի, տեսախաղային տերմինալների, վիրտուալ մոլեխաղերի և բուքմեքերական գործունեության կազմակերպմանը» ծառայության տեսակի ազդեցությունը:

**3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**


Արդյունաբերական արտադրանքի ծավալի 2018 թվականի աճի թե տարեկան և թե աճողական ցուցանիշները 2017 թվականի նույն ցուցանիշների համեմատ էականորեն ցածր են, ինչը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության կառուցվածքում 17.3% տեսակարար կշիռ ունեցող հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործում ենթաճյուղի թողարկման ծավալների կտրուկ նվազմամբ, ինչպես նաև մշակող արդյունաբերության առավել ցածր աճով:



Այսպես, եթե արդյունաբերական արտադրանքի 4.3% աճին մշակող արդյունաբերության նպաստումը կազմել է 6.3 տոկոսային կետ (աճը՝ 10.0%), իսկ էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 0.9 տոկոսային կետ (աճը՝ 5.7%), ապա հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործումն աճը զսպել է -2.9, իսկ և ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակումը՝ -0.03 տոկոսային կետով (նվազումը՝ համապատասխանաբար՝ -14.0 և -2.0%):

Հանքագործական արդյունաբերության նվազումը պայմանավորված է «մետաղական հանքաքարի արդյունահանում» ենթաճյուղի ցուցանիշների նվազմամբ (բացասական նպաստը -15.5 տոկոսային կետ), մյուս երկու՝ «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր» և


«հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն» ենթաճյուղերի գծով գրանցվել է համապատասխանաբար 42.8 և 132.5% աճ, գումարային նպաստումը՝ 1.5 տոկոսային կետ:



Թեև հանքագործական արդյունաբերության արտադրանքի արտադրության և իրացման ծավալները 2017 թվականի համեմատ նվազել են, այնուամենայնիվ արտահանումն աճել է (անվանական աճը՝ 7.4%), իսկ արտահանումն իրացման նկատմամբ ցուցանիշը կազմել է 94.6%: Բնեղեն արտահայտությամբ էական նվազում է գրանցվել հետևյալ արտադրատեսակների գծով՝ պղնձի խտանյութ՝ -25.9% (թողարկումը՝ 317.4 հազար տոննա), պղինձ կոնվերտորային՝ -26.7% (թողարկումը՝ 8.8 հազար տոննա): Մոլիբդենի խտանյութի աճը կազմել է 1.1% (թողարկումը՝ 11.1 հազար տոննա):

Մշակող արդյունաբերության աճը 2018 թվականին կազմել է 10.0%, որը 5.5 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից: Մշակող արդյունաբերության 22 ենթաճյուղերից աճին դրական նպաստ են ունեցել 19-ը՝ գումարային նպաստման չափը՝ մոտ 11.5 տոկոսային կետ:

Բացասական նպաստում են ունեցել հետևյալ ենթաճյուղերը՝ «հիմնային մետաղների արտադրություն»՝ -1.1, «էլեկտրական սարքավորանքի արտադրություն»՝ -0.4 և -0.002 տոկոսային կետով: Առավելագույն դրական նպաստն են ունեցել սննդամթերքի արտադրությունը՝ 2.9 տոկոսային կետ (աճը՝ 10.3%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ 1.7 տոկոսային կետով (աճը՝ 39.5%), ծխախոտե արտադրատեսակների արտադրությունը՝ 1.3 տոկոսային կետով (աճը՝ 8.4%) և մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում՝ 1.2 տոկոսային կետով (աճը՝ 39.5%): Մշակող արդյունաբերության արտահանումն իրացման ցուցանիշը նկատմամբ հաշվետու տարում կազմել է 42.2%, 2017 թվականի 44.9%-ի դիմաց:



Մշակող արդյունաբերության ենթաճյուղերից ըստ ընդհանուր արդյունաբերության կառուցվածքում տեսակարար կշռի նվազման 2017 թվականի համեմատ գրանցվել են հետևյալ ցուցանիշները՝

- **Սննդամթերքի արտադրություն, աճը՝ 10.3%, ընդհանուր արդյունաբերության կառուցվածքում՝ 18.8%:**

Սննդամթերքի արտադրության հաշվետու տարվա աճը գերազանցում է 2017 թվականի ցուցանիշը 7.7 տոկոսային կետով:

Բաժին և խումբ		Ծավալ, մլրդ դրամ	Տեսակարար կշիռ, %	Աճ, %	Նպաստ, տոկոսային կետ
10	Սննդամթերքի արտադրություն	327.1	100.0	10.3	-
10.3	Մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում	25.7	7.9	71.1	3.6
10.1	Մսի մշակում և պահածոյացում, մսամթերքի արտադրություն	38.7	11.8	37.5	3.5
10.5	Կաթնամթերքի արտադրություն	57.9	17.7	16.6	2.8
10.8	Այլ սննդամթերքի արտադրություն	64.1	19.6	6.1	1.2
10.7	Հացի և ալյուրե հրուշակեղենի արտադրություն	99.6	30.4	2.9	1.0
10.2	Ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում	6.0	1.8	53.9	0.7
10.9	Պատրաստի անասնակերի արտադրություն	2.3	0.7	7.6	0.1
10.4	Բուսական և կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն	0.7	0.2	3.4	0.0
10.6	Ալյրաղաց արդյունաբերության, օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրություն	32.3	9.9	-19.6	-2.6

Ինչպես և նախորդ տարիներին սննդամթերքի արտադրության արտադրատեսակների իրացման գերակշիռ մասը բաժին է ընկնում ներքին շուկային: Արտահանումն իրացման նկատմամբ ցուցանիշը 2018 թվականին կազմել է 10.5%, 2017 թվականի համեմատությամբ ավելանալով 1.3 տոկոսային կետով: Արտահանման անվանական աճը կազմել է 26.1%:

Ըստ տնտեսական գործունեության «Սննդամթերքի արտադրություն» բաժնի 7 հիմնական խմբերից նվազում է գրանցվել միայն «10.6 Ալյրաղաց արդյունաբերության, օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրություն» խմբում՝ -19.2% (տեսակարար կշիռը սննդամթերքի արտադրությունում՝ 9.9%):

Բնեղեն արտահայտությամբ նվազում է գրանցվել տավարի, խոզի և ոչխարի մսի գծով՝ համապատասխանաբար -3,3; -3.4 և -2.0%, կաթի՝ -7.9%, յոգուրտի՝ -11.9%, ալյուրի՝ -20.4%, բուսական յուղի՝ -47.1%: Պահածոներից նվազում է գրանցվել մսի, մսաբուսական, ձկան, խեցգետն, տոմատի և հացի գծով՝ համապատասխանաբար -0.7; -38.9, -14.4; -27.3; -28.4 և -2.4%: Մյուս ապրանքատեսակների գծով գրանցվել է աճ, որոնցից առավել բարձր աճեր են մարգարինային արտադրանք՝ 5 անգամ (75.2 տոննա), կենդանական յուղ՝ 2.2 անգամ (744 տոննա), կաթնաշոռ՝ 66.1% (1435.2 տոննա), մակարոնեղեն՝ 60.1% (5248.8 տոննա), մսի կիսապատրաստուկներ՝ 55.5% (1254.7 տոննա) և այլն:

- **Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն, աճը՝ 8.4%, ընդհանուր արդյունաբերության կառուցվածքում՝ 10.3%:**

Ծխախոտե արտադրատեսակների արտադրության հաշվետու տարվա աճը ցածր է 2017 թվականի ցուցանիշից 9.4 տոկոսային կետով, ինչը մասամբ պայմանավորված է նաև առկա պաշարներով: Մասնավորապես 2018 թվականին իրացվել է 175.3 մլրդ դրամի արտադրանք, 171.1 մլրդ դրամ թողարկման պայմաններում, այսինքն լրացուցիչ սպառվել է 4.2 մլրդ դրամի պաշար: Նշենք, որ 2017թ. թողարկման և իրացման տարբերությունը կազմել էր 7.6 մլրդ դրամ:

Ինչպես և նախորդ տարի ծխախոտային արտադրատեսակների արտահանման գերակշիռ մասը՝ 66.5%, բաժին է ընկնում «այլ երկրներ» խմբին, որի գծով գրանցվել է 16.5% անվանական աճ (2017թ. աճը կազմել

էր՝ 14.7%): 2017 թվականի համեմատությամբ 41.6%-ով նվազել է դեպի ԱՊՀ երկրներ արտահանումը (2017թ. աճը կազմել էր՝ 21.5%): Ներքին շուկայում իրացման ծավալը 2017 թվականի համեմատ աճել է 32.8%-ով (2017թ. աճը կազմել էր՝ 14.4%): Բնեղեն արտահայտությամբ «սիգարետների» արտադրության ծավալների աճը կազմել է 11.0%:

- **Խմիչքների արտադրություն, աճը՝ 0.9%, ընդհանուր արդյունաբերության կառուցվածքում՝ 8.8%:**

Խմիչքների արտադրության հաշվետու տարվա ցածր աճը հիմնականում պայմանավորված է 63.7% տեսակարար կշիռ ունեցող «Ալկոհոլային խմիչքների թորում, բազմաթորում և խառնում» դասի -2.1% նվազմամբ: Վերջինիս մեջ 90.1% կազմող կոնյակի (բրենդիի) արտադրության ծավալները նվազել են -3.0%-ով: Հարկ է նշել, որ բնեղեն արտահայտությամբ կոնյակի արտադրության ծավալներն աճել են 2.5 %-ով:

Բաժին և խումբ		Ծավալ, մլրդ դրամ	Տեսակարար կշիռ, %	Աճ, %	Նպաստ, տոկոսային կետ
11	Խմիչքների արտադրություն	150.6	100.0	0.9	-
11.07	Ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն. հանքային և շալցված այլ ջրերի արտադրություն	34.2	22.7	10.6	2.2
11.05	Գարեջրի արտադրություն	9.0	6.0	11.3	0.6
11.02	Խաղողի գինու արտադրություն	11.5	7.6	-5.5	-0.4
11.01	Ալկոհոլային խմիչքների թորում, բազմաթորում և խառնում	96.0	63.7	-2.1	-1.4

Նույն դասի մյուս՝ «Ալկոհոլային խմիչքների (բացի կոնյակից) թորում, բազմաթորում և խառնում» ենթադասի գծով գրանցվել է 6.3% աճ:

Բացասական նպաստում է գրանցվել նաև 7.6% տեսակարար կշիռ ունեցող «Խաղողի գինու արտադրության» գծով՝ բացասական նպաստումը՝ -0.4 տոկոսային կետ: Ի հակադրություն վերոնշյալի՝ խմիչքների արտադրությանը 2.2 տոկոսային կետով նպաստել է «Ոչ ալկոհոլային խմիչքների, հանքային և շալցված ջրերի արտադրությունը և 0.6 տոկոսային կետով՝ «Գարեջրի արտադրությունը»:

Բնեղեն արտահայտությամբ «գինիների» արտադրության աճը կազմել է 0.3%, «շամպայն գինիներինը»՝ նվազել է -13.8 %-ով: «Վիսկիների « արտադրությունը նվազել է -23.3%-ով:

Խմիչքների իրացման 59.8%-ը 2018 թվականին կազմել է արտահանումը (2017թ.՝ 63.0%), որն ընթացիկ գներով նվազել է -1.6%-ով, ինչը պայմանավորված է դեպի ԱՊՀ երկրներ արտահանման -2.9% նվազմամբ («այլ երկրներ» արտահանման աճը կազմել է 6.2%): 2017 թվականին ներքին շուկայում խմիչքների իրացման աճն ընթացիկ գներով կազմել է 12.7%:

Կոնյակի արտահանումը դեպի ԱՊՀ երկրներ ընթացիկ գներով նվազել է -3.0%-ով, իսկ «այլ երկրներ»՝ աճել՝ 13.3%-ով: Չնայած գարեջրի ընդհանուր արտահանման ընթացիկ գներով աճին, ԱՊՀ երկրներ գարեջրի արտահանման ծավալները նվազել են -7.3%-ով, ի հակադրություն դեպի «Այլ երկրներ» արտահանման 5.8% աճի:

- Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն, աճը՝ 39.5%, ընդհանուր արդյունաբերության կառուցվածքում՝ 3.5%:

«Այլ ոչ մետաղական արտադրատեսակների արտադրության» աճի գերակշիռ մասն ապահովել են առավել բարձր տեսակարար կշիռ ունեցող չորս դասերը՝ «Ցեմենտի, կրի, գիպսի և գաջի արտադրություն», «Բետոնից, ցեմենտից և գիպսից շինվածքների արտադրություն», «Ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն» և «Քարի սղոցում, մշակում և հարդարում», որոնց գումարային նպաստումը կազմել է 39.4 տոկոսային կես:

Բաժին և խումբ		Ծավալ, մլրդ դրամ	Տեսակարար կշիռ, %	Աճ, %	Նպաստ, տոկոսային կես
23	Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	62.4	100.0	39.5	-
23.5	Ցեմենտի, կրի, գիպսի և գաջի արտադրություն	25.4	40.7	43.7	17.3
23.6	Բետոնից, ցեմենտից և գիպսից շինվածքների արտադրություն	21.2	33.9	48.6	15.5
23.1	Ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն	10.0	16.1	25.1	4.5
23.7	Քարի սղոցում, մշակում և հարդարում	5.5	8.7	22.0	2.2
23.3	Կավե շինանյութի արտադրություն	0.0	0.1	184.6	0.1
23.9	Հղկանյութերի արտադրություն և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	0.3	0.4	6.8	0.04
23.2	Հրահետ արտադրատեսակների արտադրություն	0.0	0.0	-30.8	-0.03
23.4	Այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն	0.0	0.0	-23.2	-0.02

Մշակող արդյունաբերության այս ենթաճյուղի աճը սերտորեն կապված է շինարարության ոլորտի զարգացումների հետ: Արտադրանքի գերակշիռ մասը սպառվում է ներքին շուկայում, որի տեսակարար կշիռը 2018 թվականին կազմել է 87.8% (2017թ.՝ 88.3%), ընթացիկ գներով աճը՝ 33.8%: Արտադրանքի արտահանման աճը կազմել է 40.9%, հիմնականում ի հաշիվ «Այլ երկրներ» արտահանման ծավալների ավելի քան 50 անգամ աճի (Այլ երկրների տեսակարար կշիռն արտահանման մեջ՝ 73.4%): Դեպի ԱՊՀ երկրներ արտահանումը նվազել է -62.7%-ով:

Արտահանման գերակշիռ մասը կազմում են ապակե և ճենապակե արտադրատեսակները, տնտեսական գեղազարդ և խեցեգործական արտադրատեսակները: Ի տարբերություն 2017 թվականի, հաշվետու տարում արտահանվել է նաև ցեմենտ:

Բնեղեն արտահայտությամբ 2018 թվականին արտադրվել է 2110.4 հազար տոննա ոչ հանքային շինանյութեր, աճը՝ 14.4%, 629.8 հազար տոննա ապրանքային բետոն, աճը՝ 50.6%, 77.8 հազար տոննա հավաքովի երկաթբետոնե արտադրատեսակ՝ աճը՝ 25.8%, ծակոտկեն լցանյութեր՝ 160.0 հազար տոննա, աճը 36.5%: Երեսպատման սալերի ընդհանուր ծավալը կազմել է 45.0 հազար տոննա, աճը՝ 2.0 անգամ:



Տուֆի ուղիղ կտրվածքի ծավալը կազմել է 56.7 հազար տոննա, աճը՝ 2.0 անգամ, ցմենտինը՝ 546.3 հազար տոննա, աճը՝ 53.3%, բազալտե եզրաքարերինը՝ 6.7 հազար տոննա, աճը՝ 88.0%, գաջինը՝ 20.4 հազար տոննա, աճը՝ 42.2%, գիպսային շաղախինը՝ 18.3 հազար տոննա, աճը՝ 2.1 անգամ:

- Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում, աճը՝ 280.0%, ընդհանուր արդյունաբերության կառուցվածքում՝ 0.8%:

Այս հատվածը ներառում է մշակող արդյունաբերության արտադրատեսակների մասնագիտացված նորոգումը՝ դրանք աշխատանքային վիճակում պահելու համար: Այստեղ ներառվում է նաև այդ արտադրատեսակների տեխնիկական սպասարկումը՝ արդյունավետ ու երկարատև անխափան աշխատանքի ապահովման նպատակով: Ընդ որում՝ ներառվում են միայն մասնագիտացված նորոգմամբ և տեխնիկական սպասարկմամբ զբաղվող միավորները: Այս հատվածը ներառում է նաև մեքենաների և սարքավորանքի մասնագիտացված տեղակայում (սակայն, եթե տեղակայվում է շենքի կամ նման կառույցների անբաժան մաս կազմող սարքավորանքը, օրինակ՝ վերելակները, էլեկտրական սարքվածքները, օդափոխման համակարգերը, ապա նման տեղակայման աշխատանքները դասակարգվում են «Շինարարություն» (F) բաժնում):

Բաժին և խումբ		Ծավալ, մլրդ դրամ	Տեսակարար կշիռ, %	Աճ, %	Նպաստ, տոկոսային կետ
33	Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում	16.1	100.0	280.0	-
33.14	Էլեկտրական սարքավորանքի նորոգում	9.5	58.8	660.0	193.4
33.12	Մեքենաշինության արտադրանքի նորոգում	5.1	31.5	177.2	75.9
33.19	Այլ սարքավորանքի նորոգում	1.5	9.1	35.4	8.93
33.16	Օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող ապարատների նորոգում և տեխնիկական սպասարկում	0.01	0.1	100	0.0
33.11	Պատրաստի մետաղե արտադրատեսակների նորոգում	0.0	0.1	-45.9	-0.3
33.13	Էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի նորոգում	0.1	0.4	-26.9	-0.5

Այս ճյուղի ավելի քան 98-99% բաժին է ընկնում ներքին շուկային: Ի տարբերություն 2017 թվականի «մեքենաշինության արտադրանքի նորոգում» ենթադասի գծով 2018 թվականին 368.6 մլն դրամի արտահանում է եղել դեպի ԵԱՏՄ երկրներ:

- Արտադրատեսակների արտադրություն՝ չներառված այլ խմբավորումներում, աճը՝ 17.0%, ընդհանուր արդյունաբերության կառուցվածքում՝ 3.1%:

Այս ենթաճյուղի գերակշիռ մասը կազմում է «Ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք զարդերի արտադրություն, մետաղների և շքանշանների հատում» ենաճյուղը, որի մեջ առավելագույն տեսակարար կշիռ ունի «Ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը»՝ ներառյալ ադամանդների մշակումը, որն ապահովել է աճի 17.5 տոկոսային կետը: Աճը 0.5 տոկոսային կետով զսպել է ենթաճյուղի մեջ 1.1% տեսակարար կշիռ ունեցող «Բժշկական և ատամնաբուժական գործիքների ու սարքերի արտադրություն» ենթադասը:



Ադամանդների մշակման աճը կազմել է 14.9%, իսկ բնեղեն արտահայտությամբ 2018թ. մշակվել է 229.4 հազար կարատ՝ աճը 12.4% կամ +25.3 հազար կարատ:

Բաժին և ենթադաս		Ծավալ, մլրդ դրամ	Տեսակարար կշիռ, %	Աճ, %	Նպաստ, տոկոսային կետ
32.1	Ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք զարդերի արտադրություն, մետաղադրամների և շքանշանների հատում	58.3	97.4	17.5	-
32.12.1	Ադամանդների մշակում	48.9	81.7	17.9	14.9
32.12.3	Ոսկերչական զարդերի արտադրություն	8.7	14.5	13.7	2.1
32.12.2	Այլ թանկարժեք քարերի (բացի ադամանդներից) և կիսաթանկարժեք քարերի մշակում	0.7	1.1	29.6	0.3
32.12.4	Թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներից արտադրատեսակների փորագրում	0.02	0.04	590	0.04
32.12.9	Այլ ոսկերչական արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	0.004	0.01	-1.7	-0.0001

Մշակված ադամանդի 95.6%-ն արտահանվել է, աճն ընթացիկ գներով՝ 18.8%: Նախորդ տարվա համեմատ -4.7%-ով կամ 17.5 մլրդ դրամով նվազել է դեպի ԱՊՀ երկրներ մշակված ադամանդի արտահանումը: Ներքին շուկայում 2018թ. սպառվել է 1.9 մլրդ դրամի մշակված ադամանդ, նախորդ տարվա 885 մլն դրամի դիմաց: Ոսկերչական զարդերի 86.1% (2017թ.՝ 90.9%) արտահանվել է՝ ընթացիկ գներով նվազելով -6.8%-ով: Նվազում է գրանցվել ինչպես ԱՊՀ, այնպես էլ այլ երկրներ արտահանման գծով՝ համապատասխանաբար -35.2 և -1.3%-ով: Ներքին շուկայում ոսկերչական իրերի իրացման աճը կազմել է 50.3%:

- Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն, աճը՝ 32.3%, ընդհանուր արդյունաբերության կառուցվածքում՝ 2.0%:

Ենթաճյուղի ենթադասերից առավել բարձր՝ 89.6% տեսակարար կշիռ ունի «Թղթե և սովարաթղթե արտադրատեսակների արտադրություն» ենթադասը, որի նպաստումն աճին կազմել է 29.5 տոկոսային կետ:

Բաժին և խումբ, ենթադաս		Ծավալ, մլրդ դրամ	Տեսակարար կշիռ, %	Աճ, %	Նպաստ, տոկոսային կետ
17	Թուղթ և թղթե արտադրատեսակների արտադրություն	34.6	100.0	32.3	-
17.2	Թղթե և սովարաթղթե արտադրատեսակների արտադրություն	31.0	89.6	33.1	29.5
17.21.0	Ալիքավոր թղթի և սովարաթղթի, թղթից և սովարաթղթից տարալի արտադրություն	27.1	78.4	44.9	32.2
17.22.0	Սանիտարահիգիենիկ և կենցաղային նշանակության թղթե արտադրատեսակների արտադրություն	2.37	6.8	61.7	3.5
17.23.0	Գրասենյակային թղթե պիտույքների արտադրություն	1.12	3.2	-7.3	-0.3
17.29.0	Թղթե և սովարաթղթե այլ արտադրատեսակների արտադրություն	0.36	1.0	-80.8	-5.8
17.1; 17.12; 17.12.0	Թաղանթանյութի, թղթի և սովարաթղթի արտադրություն	3.6	10.4	26.0	2.9

Վերջինիս մեջ գերակշռում է «Ալիքավոր թղթի և սովարաթղթի, թղթից և սովարաթղթից տարայի արտադրությունը», որի 99.8% սպառվում է ներքին շուկայում, ընթացիկ գներով աճը՝ 43.4%: 2017 թվականին այս արտադրատեսակների գծով արտահանում չի եղել, իսկ 2018թ. իրականացվել է 22.8 մլն դրամի արտահանում, որի մոտ 99.0% բաժին է ընկել «Այլ երկրներ» խմբին:

«Սանիտարահիգիենիկ և կենցաղային նշանակության արտադրատեսակների» գծով ևս գերակշիռ սպառումն (97.5%) իրականացվել է ներքին շուկայում՝ ընթացիկ գներով աճը՝ 51.5%: Այս արտադրանքի գծով ևս, ի տարբերություն 2017 թվականին արտահանման բացակայության, 2018 թվականին արտահանվել է 56.9 մլն դրամի արտադրանք:

- **Հագուստի արտադրություն, աճը՝ 40.8%, ընդհանուր արդյունաբերության կառուցվածքում՝ 1.3%:**

Թեև տեսակարար կշռով «Հագուստի արտադրությունը՝ բացի մորթե հագուստից» խմբի տեսակարար կշիռն ավելին է (65.0%), քան «Տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն» խմբինը (65.0%), ենթաճյուղի աճին առավելագույն՝ 21.2 տոկոսային կետ նպաստում ունեցել է վերջինս՝ 75.1% աճի շնորհիվ:

Բաժին և խումբ, ենթադաս		Ծավալ, մլրդ դրամ	Տեսակարար կշիռ, %	Աճ, %	Նպաստ, տոկոսային կետ
14	<b>Հագուստի արտադրություն</b>	<b>23.7</b>	<b>100.0</b>	<b>40.8</b>	-
14.3	Տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն	8.3	35.0	75.1	21.2
14.31.0	Տրիկոտաժե գուլպեղենի արտադրություն	7.2	30.5	75.3	18.4
14.39.0	Այլ տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն	1.1	4.5	73.9	2.7
14.1	<b>Հագուստի արտադրություն, բացի մորթե հագուստից</b>	<b>15.4</b>	<b>65.0</b>	<b>27.4</b>	<b>19.7</b>
14.13.1	Վերնազգեստի արտադրություն	6.4	27.0	30.6	8.9
14.19.9	Այլ հագուստի և պարագաների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	3.6	15.2	54.1	7.5
14.12.0	Արտահագուստի արտադրություն	5.0	21.3	11.4	3.1
14.14.0	Ներքնազգեստի արտադրություն	0.2	0.7	25.4	0.2
14.19.2	Ներածինների համար հագուստի արտադրություն	0.1	0.4	50.2	0.2
14.19.3	Սպորտային հագուստի արտադրություն	0.03	0.1	84.3	0.1
14.13.2	Վերնազգեստի անհատական կարում	0.0	0.0	-94.2	-0.6
14.19.1	Գլխարկների արտադրություն	0.05	0.2	-54.5	-0.3

**«14.3 Տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն» :** Վերջինիս «տրիկոտաժե գուլպեղենի արտադրության» ենթադասի նպաստումը ենթաճյուղի աճին կազմել է 18.4 տոկոսային կետ, իսկ այլ տրիկոտաժե արտադրությանը՝ 2.7 տոկոսային կետ: «Տրիկոտաժե գուլպեղենի արտադրանքի 72.5%-ն

արտահանվել է՝ արտահանման աճը՝ 60.0% (99.0%՝ «Այլ երկրներ»): Ներքին շուկայում սպառումն ընթացիկ գներով աճել է 51.1% -ով:


«Այլ տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն» ենթադասի արտադրանքի 26.1%-ն է արտահանվել: Ներքին շուկայում սպառումն աճել է 61.7%-ով:

«14.1 Հագուստի արտադրություն՝ բացե մորթե հագուստի»: Խմբի աճին առավելագույն նպաստում ունի «Վերնազգեստի արտադրություն» ենթադասը՝ 8.9 տոկոսային կետ: Արտադրանքի 72.3%-ն արտահանվել է ( ընթացիկ գներով աճը՝ 60.4%): Ներքին շուկայում սպառման աճը կազմել է 2.5%: «Այլ հագուստի և պարագաների արտադրություն» ենթադասի արտադրանքի 80.8%-ն արտահանվել է ԱՊՀ երկրներ՝ ընթացիկ գներով աճը կազմել է 72.2%: Ներքին շուկայում սպառված արտադրանքի աճը կազմել է 2.9%:

«Արտահագուստի արտադրություն» ենթադասի 57.6%-ն արտահանվել է, ընթացիկ գներով աճը՝ 0.4%: Դեպի «Այլ երկրներ»՝ աճել 6.8%-ով (արտահանման 97.7%), ԱՊՀ երկրներ արտահանումը նվազել է 72.1%-ով: Ներքին շուկայում սպառվել է 42.4%-ը, աճը՝ 20.8%:

#### 4. ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2018 թվականին արտաքին առևտրաշրջանառության աճը կազմել է 16.4%: Արտահանումն աճել է 7.8%, իսկ ներմուծումը՝ 21.1%:




#### Արտահանում

Ըստ ապրանքախմբերի (ըստ կառուցվածքում մասնաբաժնի նվազման)՝

արտահանման աճ է գրանցվել. պատրաստի սննդի արտադրանք՝ 5.6%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 5.3%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 10.3%, մանածագործական իրեր՝ 65.4%, բուսական ծագման արտադրանք՝ 47.8%, սարքեր և ապարատներ՝ 34.1%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ 5.3%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ 65.6%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 51.1%, պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ 38.8%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 32.7%, կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 58.2%, թուղթ և թղթից իրեր՝ 14.2%:

արտահանման նվազում է գրանցվել հետևյալ ապրանքախմբերի գծով՝ հանքահումքային արտադրանք՝ -4.7%, կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք՝ -13.5%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ -39.4%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ -3.6%,

փայտ և փայտյա իրեր՝ -17.9%, արվեստի ստեղծագործություններ՝ -20.9%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ -33.3%:



**Ըստ երկրների խմբերի (հիմնական գործընկեր երկրներն՝ ըստ խմբում տեսակարար կշռի նվազման)**

**ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ** – արտահանման աճը կազմել է 20.9%,

Արտահանման աճ է գրանցվել դեպի Ռուսաստան՝ 19.6%, Ուկրաինա՝ 79.1%, Բելառուս՝ 66.5%, Ղազախստան՝ 98.2% և ԱՊՀ այլ երկրներ՝ 15.5%: Արտահանման նվազում է գրանցվել դեպի Թուրքմենստան՝ -48.8% և Ղրղզստան՝ -45.0%:

**ԵՄ ԵՐԿՐՆԵՐ** - արտահանման աճը կազմել է 7.9%,

Արտահանման աճ է գրանցվել դեպի Գերմանիա՝ 2.2%, Նիդերլանդներ՝ 49.4%, Ռումինիա՝ 15.5 անգամ, Իտալիա՝ 15.2%, Բելգիա՝ 7.5%, Ֆրանսիա՝ 82.0%, ԵՄ այլ երկրներ՝ 12.8%, Միացյալ Թագավորություն՝ 54.7% և Ավստրիա՝ 3.3 անգամ: Նվազում է գրանցվել դեպի Բուլղարիա՝ -23.8% և Հունգարիա՝ -68.9%:

**ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ** - արտահանման աճը կազմել է 0.0%,



Արտահանման աճ է գրանցվել դեպի Շվեյցարիա՝ 28.7%, Իրաք՝ 28.3%, Իրանի Իսլամական Հանրապետություն՝ 12.0%, «Այլ երկրներ» ենթախումբ՝ 17.6%, Կանադա՝ 2.2 անգամ, Թուրքիա՝ 2.8 անգամ: Նվազում է գրանցվել դեպի Չինաստան՝ -9.5%, Արաբական Միացյալ Էմիրություններ՝ -27.8%, Վրաստան՝ -55.1%, ԱՄՆ՝ -28.0%:

**Ներմուծում**

**Ըստ ապրանքախմբերի (ըստ կառուցվածքում մասնաբաժնի նվազման)**

Ներմուծման աճ է գրանցվել հետևյալ ապրանքախմբերի գծով. մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ 48.8%, հանքահումքային արտադրանք՝ 11.4%, պատրաստի սննդի արտադրանք՝ 13.2%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ 46.2%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 16.5%, մանածագործական իրեր՝ 20.7%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 22.6%, բուսական ծագման արտադրանք՝ 14.2%, պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ 16.3%, տարբեր արդյունաբերական ապարատներ՝ 29.9%, սարքեր և ապարատներ՝ 41.4%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 8.3%, թուղթ և թղթից իրեր՝ 19.0%, կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 25.3%, փայտ և փայտյա իրեր՝ 24.3%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ 11.9%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 25.9%:

ներմուծման նվազում է գրանցվել քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ -2.7%, կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք՝ -1.4% և արվեստի ստեղծագործություններ ապրանքախմբերի գծով՝ -21.3%:



**Ըստ երկրների խմբերի (հիմնական գործընկեր երկրներին՝ ըստ խմբում տեսակարար կշռի նվազման)**

**ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ** - ներմուծման աճը կազմել է 12.6%:

Ներմուծման աճ է գրանցվել հետևյալ երկրներից. Ռուսաստան՝ 9.8%, Ուկրաինա՝ 33.2%, Բելառուս՝ 0.1%, Թուրքմենստան՝ 2.6 անգամ, ԱՊՀ այլ երկրներ՝ 57.5%, Ուզբեկստան՝ 89.1% և Ղրղզստան՝ 2.8 անգամ: Ներմուծման նվազում է գրանցվել Ղազախստանից՝ -12.8%-ով:

**ԵՄ ԵՐԿՐՆԵՐ** – ներմուծման աճը կազմել է 30.5%:

Ներմուծման աճ է գրանցվել հետևյալ երկրներից. Գերմանիա՝ 49.9%, Իտալիա՝ 13.3%, Նիդերլանդներ՝ 26.5%, Ֆրանսիա՝ 61.0%, Չեխիա՝ 2.0 անգամ, Հունաստան՝ 33.1%, Կիպրոս՝ 5.3 անգամ, «ԵՄ այլ երկրներ» ենթախումբ՝ 39.1%, Իսպանիա՝ 11.1%: Ներմուծման նվազում է գրանցվել Բելգիայից՝ -0.8%, Լեհաստանից՝ -9.2% և Բուլղարիայից՝ -0.4%:

**ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ** - ներմուծման աճը կազմել է 23.2%:

Ներմուծման աճ է գրանցվել հետևյալ երկրներից. Չինաստան՝ 39.7%, Վրաստան՝ 4.6%, «Այլ երկրներ» ենթախումբ՝ 45.5%, Իրանի Իսլամական Հանրապետություն՝ 55.2%, Արաբական Միացյալ Էմիրություններ՝ 9.0%, Միացյալ Նահանգներ՝ 46.8%, Թուրքիա՝ 4.3%, Շվեյցարիա՝ 8.6%, Կորեա՝ 40.0%: Ներմուծման նվազում է գրանցվել Բրազիլիայից՝ -18.6% և Ճապոնիայից՝ -10.6%:

**5. ՕՏԱՐԵՐԿՐՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ**

2018 թվականի հունվար\_սեպտեմբերին իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների համախառն ներհոսքը կազմել է 1.7 մլրդ ԱՄՆ դոլար, որից ուղղակի ներդրումների ներհոսքը կազմել է 386 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ընդհանուր ներդրումների<sup>[1]</sup> զուտ հոսքերի<sup>[2]</sup> ծավալը կազմել է -1.9 մլրդ ՀՀ դրամ (բացարձակ փոփոխությունը 2017 հունվար\_սեպտեմբերի


[1] Ընդհանուր ներդրումները ներառում են ուղղակի, պորտֆելյային և այլ ներդրումները (վերջինում ներառվում են վարկերը և փոխառությունները, ապրանքների և ծառայությունների դիմաց վճարվելիք/ստացվելիք գումարները, ստացված/տրված կանխավճարները):

[2] Զուտ հոսքերը հաշվետու ժամանակաշրջանում օտարերկրյա ներդրումների գծով ստացումների և մարումների տարբերություններն են:

համեմատ՝ 348.6 մլն ՀՀ դրամ), որից ՕՈՒՆ ծավալը՝ 59.8 մլրդ ՀՀ դրամ (բացարձակ փոփոխությունը՝ 2.8 մլրդ ՀՀ դրամ):

Ըստ գործունեության տեսակների՝ ընդամենը ներդրումների զուտ հոսքերը հիմնականում ուղղվել են՝

- հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն (58.9 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 20.9 մլրդ դրամ, երկիրը՝ Ջերսի, Իռլանդիա, Ռուսաստան),
- մեծածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից (7.1 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 3.1 մլրդ դրամ, երկրները՝ Ռուսաստան, Շվեյցարիա),
- հեռահաղորդակցություն (6.8 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներ՝ 0.8 մլրդ դրամ, երկրները՝ Ռուսաստան, Կիպրոս, Լիբանան),
- հիմնային մետաղների արտադրություն (3.3 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներ՝ 5.2 մլրդ դրամ, երկրները՝ Միացյալ Թագավորություն, Ռուսաստան, Գերմանիա),
- խմիչքների արտադրություն (3.2 մլրդ դրամ, ուղղակի՝ 2.7 մլրդ դրամ, երկրները՝ Ֆրանսիա, Լյուքսեմբուրգ, Միացյալ Թագավորություն),
- ցամաքային տրանսպորտի գործունեություն (1.6 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներ՝ 1.3 մլրդ դրամ, երկրները՝ Ռուսաստան),
- կացության կազմակերպում (1.6 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներ՝ 1,6 մլրդ դրամ, երկրները՝ Կիպրոս, Ֆրանսիա, Իտալիա)
- էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ (1.4 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներ՝ 6.5 մլրդ դրամ, երկրները՝ Ռուսաստան, Ֆինլանդիա),
- ծխախոտային արտադրատեսակների արտադրություն (0.8 մլրդ դրամ, երկիրը՝ Կանադա):



### 6. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ


2018 թվականի հունվար-դեկտեմբերին հանրապետություն է ժամանել 1 մլն 651 հազար 800 զբոսաշրջիկ, աճը՝ 10.5%:

ՀՀ ԱՎԿ կողմից զբոսաշրջության բացվածքը դեռ չի հրապարակվել: ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տեղեկատվության համաձայն ըստ ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի 1.7 անգամ աճ է գրանցվել Հարավային Կորեայից և Հնդկաստանից, 1.1 անգամ՝ Սինգապուրից ժամանած զբոսաշրջիկների գծով:

Ըստ տեսակարար կշռի, հաշվետու տարում զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակում առավելագույն տեսակարար կշիռ ունեցել են Ռուսաստանի Դաշնությունից ժամանածները՝ 41.4%, աճը՝



17.0%, որին հաջորդել է Իրանը՝ տեսակարար կշիռը՝ 9.7%, նվազումը՝ -27.0% ԱՄՆ՝ տեսակարար կշիռը՝ 3.3%, աճը՝ 20.5%, Հնդկաստանը՝ տեսակարար կշիռը՝ 1.9%, աճը՝ 1.7 անգամ, Գերմանիան՝ տեսակարար կշիռը՝ 1.7%, աճը՝ 36.4%:



Ներքին զրոսաշրջության ցուցանիշն աճել է 0.5%-ով՝ կազմելով 1 մլն 92 հազար 300 մարդ: Ներքին զրոսաշրջության կառուցվածքում 71.6%-ը բաժին է ընկել հանգստի և ժամանցի նպատակով այցելություններին (աճը՝ 5.3%), 19.0%-ը՝ գործնական նպատակով (նվազումը՝ -17.81%), 5.3%-ը բուժման նպատակով (աճը՝ 33.9%) և 4.1%-ը՝ այլ նպատակով (նվազումը՝ -7.5%):